

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ա Ն Պ Ա Գ-ԾՁԲ-476

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԷՄԲՐԻՈՆ ՍՊԸ-Ի

(հրավաթանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտյոմ Սմբատյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Էմբրիոն ՍՊԸ (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Գեղամ Սիմոնյանի, որը գործում է Էմբրիոն ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-ԲՕ-002216 տրված 20.12.2016թ.-ին

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուլի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

- 2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքայի և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,
- 2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,
- 2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),
- 2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,
- 2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվոտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայքէջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,

2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),

2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտակումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքավորված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախագազույցացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

- 4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,
- 4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,
- 4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,
- 4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,
- 4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,
- 4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,
- 4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

- 6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,
- 6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,
- 6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,
- 6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Առողջապահության նախարարություն**Էմբրիոն ՍՊԸ**

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե Ք.Հրազդան, Սպանդարյան 47/4,47/7

Սպասարկող ֆն գործառնական վարչություն
բանկ

Սպասարկող Արդշինբանկ ՓԲԸ
բանկ

Բանկային 900011105013
հաշիվ
ՀՎՀՀ 02507171

Բանկային 2479222154510000
հաշիվ
ՀՎՀՀ 03014164

ԱՆ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Արտյոն Սմբատյան

Տնօրեն՝

Գեղամ Սիմոնյան

/ստորագրություն/

/ստորագրություն/

« 29 » ապրիլի 2019 թ

« 29 » ապրիլի 2019 թ

Հեռ: +37460808003

Հեռ: +37494969398

Ֆաքս:

Ֆաքս:

E-mail: info@moh.am

E-mail: embrion47@mail.ru

ՑԱԼԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՄՊԱՍԱՐԿԱՆ
 ԸՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԱՆՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
 ՄՊՂ

ԷՄՔԻՈՆ

(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

| Շտապության և կոդը | Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը | Չափման միավորը | Գին | Միավորի օրական գինը (դրամ) |
|----------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|--------|----------------------------------|
| 2.4 | Գինեկոլոգիական | | | |
| 0205003 | Արգանքի հստոցի ընդունում հիվանդանոցային պայմաններում /մեծ/գինեկ / | ԴԵՊՁ | 23500 | |
| 0205004 | Վիրահատություններ արտաքին սեռական օրգանների և հեշտոցի պատերի վնասվածքների ժամանակ /մեծ/ | ԴԵՊՁ | 23500 | |
| 0301294 | Գինեկոլոգիական /մեծ/ | ԴԵՊՁ | 107900 | |
| 0301297 | Գինեկոլոգիական գեներալի և ստացիոնարի պայմաններում/մեծ/ | ԴԵՊՁ | 43160 | |
| 1101200 | Արգանքի հստոցի ընդունում , հղիության արհեստական ընդհատում | ԴԵՊՁ | 400000 | |
| 1101201 | Շեղի և/կամ հեշտոցի պատերի բարորակ նորագոյացությունների հեռացում; արգանքի պարանցի ամպուտացիա, էլեկտրոկոնիզացիա; ռեզեկտոհիստերոսկոպիա | ԴԵՊՁ | 100000 | |
| 1101202 | Հեշտոցի միջնապատի հատում; բարոտրիկալ գերծի կիստայի հեռացում | ԴԵՊՁ | 114000 | |
| 1101203 | LUNA, հեշտոցի պատերի պլաստիկ; կոնսերվատիվ միոմէկտոմիա | ԴԵՊՁ | 220000 | |
| 1101204 | Սուբտոտալ արդոմիալ հիստերէկտոմիա; սալպինգէկտոմիա; օվարիէկտոմիա; ադնեքսէկտոմիա (բորոքային ուռուցքների դեպքում); ձվարանի կիստայի և/կամ կիստոմաների հեռացում | ԴԵՊՁ | 230000 | |
| 1101205 | Վազինալ հիստերէկտոմիա; Մանյեստերիան վիրահատություն | ԴԵՊՁ | 270000 | |
| 1101206 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս; վիրահատություն պրոստիտերէկտոմիկ պրոպատիս դեպքում | ԴԵՊՁ | 300000 | |
| 1101207 | Տոտալ լավարակոպիկ հիստերէկտոմիա; կոլպոհիստերէկտոմիա; ռեկտո-վազինալ տարածքի որովայնամզի լավարակոպիկ հեռացում; վուլվէկտոմիա | ԴԵՊՁ | 280000 | |
| 1101208 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա հարակից օրգանների վրա ուռուցքի տարածմամբ | ԴԵՊՁ | 331000 | |
| 1101209 | Պանիստերէկտոմիա հիե-պարաստոտալ լիմֆոդիսեկցիայով; Լայնազված վուլվէկտոմիա անոկա-իլեոկա լիմֆոդիսեկցիայով | ԴԵՊՁ | 331000 | |
| 1101210 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա TOT-ով; վազինալ հիստերէկտոմիա լավարակոպիկ ամիստեկցիայով (LAVH) TOT-ով; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս TOT-ով; վիրահատություն պրոստիտերէկտոմիկ պրոպատիս դեպքում TOT-ով | ԴԵՊՁ | 331000 | |
| 1101211 | Վիրահատություններ անմիզապառնային ժամանակ TOT-ով (առանց ժապավենի գնի) | ԴԵՊՁ | 331000 | |
| 1101212 | Էնդոմետրիոի օջախների կազոպացիա կամ Էնդոմետրիոիայի կիստայի հեռացում; ռեոտրոգրիվկա Էնդոմետրիոի; սալպինգոնեոտոմիա | ԴԵՊՁ | 280000 | |
| 1101213 | Հիստերոսկոպիա լավարակոպիայի հսկողության տակ | ԴԵՊՁ | 280000 | |
| 1101214 | Պրոմոնտո Ֆիրացիա/արգանքի, հեշտոցի պատերի մկանների և դարավանդի Ֆիրացիա/ | ԴԵՊՁ | 510000 | |
| 1101215 | Արգանքի վզիկի կրիոնետրոկցիա ներերակային անզգայացումով | ԴԵՊՁ | 110500 | |
| 1101216 | Անոկա-ագրոպիս լիմֆոդիսեկցիա միակողմանի | ԴԵՊՁ | 255000 | |
| 1101217 | Անոկա-ագրոպիս լիմֆոդիսեկցիա երկկողմանի | ԴԵՊՁ | 382000 | |
| 1101814 | Ախտորոշչի հիստերոսկոպիա | ԴԵՊՁ | 100000 | |
| 1102735 | Չվարանների չարորակ ուռուցքների հեռացում | ԴԵՊՁ | 331000 | |
| 2101200 | Արգանքի հստոցի ընդունում , հղիության արհեստական ընդհատում | ԴԵՊՁ | 40000 | |
| 2101201 | Շեղի և/կամ հեշտոցի պատերի բարորակ նորագոյացությունների հեռացում; արգանքի պարանցի ամպուտացիա, էլեկտրոկոնիզացիա; ռեզեկտոհիստերոսկոպիա | ԴԵՊՁ | 100000 | |
| 2101202 | Հեշտոցի միջնապատի հատում; բարոտրիկալ գերծի կիստայի հեռացում | ԴԵՊՁ | 114000 | |
| 2101203 | LUNA, հեշտոցի պատերի պլաստիկ; կոնսերվատիվ միոմէկտոմիա | ԴԵՊՁ | 220000 | |
| 2101204 | Սուբտոտալ արդոմիալ հիստերէկտոմիա; սալպինգէկտոմիա; օվարիէկտոմիա; ադնեքսէկտոմիա (բորոքային ուռուցքների դեպքում); ձվարանի կիստայի և/կամ կիստոմաների հեռացում | ԴԵՊՁ | 230000 | |
| 2101205 | Վազինալ հիստերէկտոմիա; Մանյեստերիան վիրահատություն | ԴԵՊՁ | 270000 | |
| 2101206 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս; վիրահատություն պրոստիտերէկտոմիկ պրոպատիս դեպքում | ԴԵՊՁ | 300000 | |
| 2101207 | Տոտալ լավարակոպիկ հիստերէկտոմիա; կոլպոհիստերէկտոմիա; ռեկտո-վազինալ տարածքի որովայնամզի լավարակոպիկ հեռացում; վուլվէկտոմիա | ԴԵՊՁ | 280000 | |
| 2101208 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա հարակից օրգանների վրա ուռուցքի տարածմամբ | ԴԵՊՁ | 331000 | |
| 2101209 | Պանիստերէկտոմիա հիե-պարաստոտալ լիմֆոդիսեկցիայով; Լայնազված վուլվէկտոմիա անոկա-իլեոկա լիմֆոդիսեկցիայով | ԴԵՊՁ | 331000 | |
| 2101210 | Տոտալ արդոմիալ հիստերէկտոմիա TOT-ով; վազինալ հիստերէկտոմիա լավարակոպիկ ամիստեկցիայով (LAVH) TOT-ով; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս TOT-ով; վիրահատություն պրոստիտերէկտոմիկ պրոպատիս դեպքում TOT-ով | ԴԵՊՁ | 331000 | |
| 2101211 | Վիրահատություններ անմիզապառնային ժամանակ TOT-ով (առանց ժապավենի գնի) | ԴԵՊՁ | 331000 | |
| 2101212 | Էնդոմետրիոի օջախների կազոպացիա կամ Էնդոմետրիոիայի կիստայի հեռացում; ռեոտրոգրիվկա Էնդոմետրիոի; սալպինգոնեոտոմիա | ԴԵՊՁ | 280000 | |
| 2101213 | Հիստերոսկոպիա լավարակոպիայի հսկողության տակ | ԴԵՊՁ | 280000 | |
| 2101214 | Պրոմոնտո Ֆիրացիա/արգանքի, հեշտոցի պատերի մկանների և դարավանդի Ֆիրացիա/ | ԴԵՊՁ | 510000 | |
| 2101215 | Արգանքի վզիկի կրիոնետրոկցիա ներերակային անզգայացումով | ԴԵՊՁ | 110500 | |
| 2101216 | Անոկա-ագրոպիս լիմֆոդիսեկցիա միակողմանի | ԴԵՊՁ | 255000 | |
| 2101217 | Անոկա-ագրոպիս լիմֆոդիսեկցիա երկկողմանի | ԴԵՊՁ | 382000 | |
| 2101814 | Ախտորոշչի հիստերոսկոպիա | ԴԵՊՁ | 100000 | |
| 2102735 | Չվարանների չարորակ ուռուցքների հեռացում | ԴԵՊՁ | 331000 | |
| 2.5 | ՇՆՊԻՆՏՐՎԱԾ ՎԻՐԱՊՐՈՒԹՅԱՆ | | | |
| 0201005 | Սուր միզակապոթում /մեծ/ | ԴԵՊՁ | 23500 | |
| 0201006 | Երկամալիս խթ /մեծ/ | ԴԵՊՁ | 23500 | |
| 0202000 | ՇՆՊԻՆՏՐՎԱԾ ՎԻՐԱՊՐՈՒԹՅԱՆ /մեծ/ | ԴԵՊՁ | 107900 | |
| 0202010 | Փոքր վիրահատական միջամտություններ /մեծ/ | ԴԵՊՁ | 23500 | |
| 0301080 | Թաղանթալի վիրաբուժություն (ներառյալ արյան զանրսով հաստատված սեպսիս) /մեծ/ | ԴԵՊՁ | 217900 | 13600 |
| 0302004 | Վիրաբուժական բաժանմունքներում բժշկական հակացուցումներով չվիրահատված հիվանդների հետադարձությունների փոխհատուցում /մեծ/ | ԴԵՊՁ | 15000 | |
| 0502001 | ՇՆՊԻՆՏՐՎԱԾ ՎԻՐԱՊՐՈՒԹՅԱՆ (ԵՐԿԻՏ) | ԵՐԿԻՏ | 179000 | |
| 0709002 | Բուժաստատության միջոցներով գնված հակաթյուն դեղորայքի մաստազի ծախս | ԴՐԱՄ | 120000 | |
| 1700000 | Վերքի առաջնային վիրաբուժական մշակում և կարում | ԴԵՊՁ | 12000 | |
| 1700001 | Պարոնիխիալեո, ներառած եղունգ, եղունգի հեռացում | ԴԵՊՁ | 12000 | |
| 1700002 | Ֆիզիոնալի, թալպիսկոպի (արքայե) քաղցր | ԴԵՊՁ | 12000 | |
| 1700003 | Կնուսանիների կողմից հասցված վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակում (ՀՓ կամ ՀԿ շիճուկների ներառվածմամբ) | ԴԵՊՁ | 12000 | |
| 1700004 | Փոքր վերքերի միակապոթումներ առանց կարերի | ԴԵՊՁ | 4000 | |
| 1700005 | Ուռնոտային պոնդոպլաստիկ | ԴԵՊՁ | 17000 | |
| 1700006 | Լոբէկտոմիա | ԴԵՊՁ | 450000 | |
| 1700007 | Կրծքային փոքր վիրահատություններ՝ կրծքավանդակի պատի ուռուցքների հեռացում առանց ընդհանուր անզգայացման | ԴԵՊՁ | 125000 | |
| 1700008 | Պլեկալ հստոցի դրենափորում | ԴԵՊՁ | 70000 | |
| 1700009 | Պլեկալ պոնդոպլաստիկ | ԴԵՊՁ | 25000 | |
| 1700010 | Վենէկտոմիա, թրոմբէկտոմիա (թրոմբէկտոմիա) | ԴԵՊՁ | 240000 | |
| 1700011 | Վիրահատություններ պերիտոնիկ գարներակների վրա, Էնդոպրոտերէկտոմիա | ԴԵՊՁ | 300000 | |
| 1700012 | Փոքր անոթային վիրահատություններ | ԴԵՊՁ | 145000 | |
| 1700013 | Երկկողմանի վենէկտոմիա | ԴԵՊՁ | 350000 | |
| 1700014 | Ապենդէկտոմիա | ԴԵՊՁ | 170000 | |
| 1700015 | Ապենդէկտոմիա լավարակոպիկ | ԴԵՊՁ | 220000 | |

| | | | | |
|---------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|--------|-------|
| 1700016 | Լեռնապարկի հեռացում | ԴԵՊՔ | 200000 | |
| 1700017 | Լեռնապարկի հեռացում յայտարարական | ԴԵՊՔ | 220000 | |
| 1700018 | Լյադրի էլիևոկոկի հեռացում | | 238000 | |
| 1700019 | Լյադրի էլիևոկոկի հեռացում յայտարարական | ԴԵՊՔ | 250000 | |
| 1700020 | Երկաթաբահատում միակողմանի (առանց զանցի արժեքի) | ԴԵՊՔ | 200000 | |
| 1700021 | Երկաթաբահատում յայտարարական միակողմանի (առանց զանցի արժեքի) | ԴԵՊՔ | 240000 | |
| 1700022 | Վեներալ մեծ ճողվածք (առանց զանցի արժեքի) | ԴԵՊՔ | 250000 | |
| 1700023 | Փայծակի հեռացում | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700024 | Վիրահատություններ խոլեդոխի վրա | ԴԵՊՔ | 382000 | |
| 1700025 | Գաստրոէկտոմիա | ԴԵՊՔ | 470000 | |
| 1700026 | Հետորովայնաձային ոչ օրգանային ուռուցքների հեռացում | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700027 | Մեծ ճարպոտի հեռացում | ԴԵՊՔ | 210000 | |
| 1700028 | Փոքրածավալ ուռուցքների հեռացում (ռեդային անզգայացմամբ) | ԴԵՊՔ | 76000 | |
| 1700029 | Փոքրածավալ ուռուցքների հեռացում (ռեդային անզգայացմամբ) | ԴԵՊՔ | 120000 | |
| 1700030 | Վիրահատություններ խոջային հիվանդության կապակցությամբ | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700031 | Վիրահատություններ անանջանքիության դեպքում | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700032 | Ախտորոշիչ կապարոտմիա | ԴԵՊՔ | 153000 | |
| 1700033 | Կարճ սաննիկ (հատում) | ԴԵՊՔ | 102000 | |
| 1700034 | Այախակա Ֆիմոզ (թափափում) | ԴԵՊՔ | 102000 | |
| 1700035 | Մետատուսնոց (մետատուսնոց) | ԴԵՊՔ | 102000 | |
| 1700036 | Թիմպի պլաստիկ ֆիմոզի կապակցությամբ | ԴԵՊՔ | 178500 | |
| 1700037 | Հիպոսպադիա դիստալ ձև MAGPI եղանակով | ԴԵՊՔ | 178500 | |
| 1700038 | Ամորձու թաղանթների ջրզորության վիրահատություն | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700039 | Սերմնալարի կիստայի հեռացում | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700040 | Օրխիէկտոմիա | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700041 | Օրխիէկտոմիա երկկողմանի | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700042 | Ներքին աճուկային օտգ զար կրիպտորիզմի վիրահատություն | ԴԵՊՔ | 195500 | |
| 1700043 | Սերմնալարի եղանակի լայնացում՝ բարձր հատում | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700044 | Ամորձու սուր հիվանդություններ, ամորձու ոլորում, ամորձու պատվածք, կախոցի ոլորում, սուր օրխիտիզիզիմիտ և այլ | ԴԵՊՔ | 170000 | |
| 1700045 | Առանցքային անզգայացում | ԴԵՊՔ | 195000 | |
| 1700046 | Երկվանդերի վնասվածքներ, որոնք պահանջում են վիրահատական միջամտություն | ԴԵՊՔ | 450000 | |
| 1700047 | Միզաձորանի ստենոզիրում | ԴԵՊՔ | 59000 | |
| 1700048 | Ուրեթրոցիտոսկոպիա անստորոշիչ նպատակով | ԴԵՊՔ | 35000 | |
| 1700049 | Պերիտոնալ ցիստոտոմիա | ԴԵՊՔ | 59000 | |
| 1700050 | Ներքին թուփային հանգույցների լիզավորում | ԴԵՊՔ | 153000 | |
| 1700051 | Պարապրոկտիտի, պրոկտի էպիթելիալի խտրակի կտրվածք | ԴԵՊՔ | 119000 | |
| 1700052 | Անալ ստրիկտուրայի վերացում | ԴԵՊՔ | 119000 | |
| 1700053 | Թուփային անզգայացում և/կամ ճարձի հեռացում | ԴԵՊՔ | 160000 | |
| 1700054 | Պարապրոկտիտի բացազատում աղբյուր լուսանցքում | ԴԵՊՔ | 160000 | |
| 1700055 | Ախտահարված հյուսվածքների հեռացում | ԴԵՊՔ | 160000 | |
| 1700056 | Ուրիդի աղբյուր օտար մարմնի տրանսանալ հեռացում | ԴԵՊՔ | 153000 | |
| 1700057 | Պերիտոնալ կանխումաների հեռացում | ԴԵՊՔ | 153000 | |
| 1700058 | Պրոկտի էպիթելիալի խտրակի հեռացում | ԴԵՊՔ | 160000 | |
| 1700059 | Միջին տարանվանության անատոմիայի հեռացում | ԴԵՊՔ | 204000 | |
| 1700060 | Պրոկտիտոմիա կոլոնոսկոպի միջոցով | ԴԵՊՔ | 160000 | |
| 1700061 | Ռեկտոցեկե վերացում | ԴԵՊՔ | 204000 | |
| 1700062 | Իլեո-կոլոստոմիայի ձևավորում | ԴԵՊՔ | 255000 | |
| 1700063 | Արիտիտի շրջանցող բերանակցում | ԴԵՊՔ | 255000 | |
| 1700064 | Կոլոտոմիա | ԴԵՊՔ | 255000 | |
| 1700065 | Անալ թուփ պարապրոկտիտի բացազատում | ԴԵՊՔ | 255000 | |
| 1700066 | Տարածված անատոմիայի հեռացում | ԴԵՊՔ | 255000 | |
| 1700067 | Խթարու մասնահատում ստամոքյով | ԴԵՊՔ | 306000 | |
| 1700068 | Չղջարանն կարող սարքի օգտագործմամբ հաստ աղու վերականգնողական վիրահատություններ Գարունի տիպի և Միկոլայի վիրահատություններից հետո | ԴԵՊՔ | 340000 | |
| 1700069 | Խթարու մասնահատում բերանակցմամբ | ԴԵՊՔ | 340000 | |
| 1700070 | Կողմալուծված համակցված վիրահատություններ | ԴԵՊՔ | 382000 | |
| 1700071 | Պրոկտիտոմիա ռեկտոսկոպի միջոցով | ԴԵՊՔ | 30000 | |
| 1700072 | Փոքր մետատուսնոց կոնստրուկցիայի հեռացում (բացազատությամբ արտաօպերատիվ կոնստրուկցիաների) | ԴԵՊՔ | 100000 | |
| 1700073 | Մեծ մետատուսնոց կոնստրուկցիայի հեռացում | ԴԵՊՔ | 153000 | |
| 1700074 | Անրակոստի, թիմոստի, ծնկոստի, կրոնոստի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 180000 | |
| 1700075 | Ճանճակոստի, ծիլակոստի, ոլորի միջային պեղի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 240000 | |
| 1700076 | Անրակոստի, թիմոստի, ծնկոստի, կրոնոստի, ճանճակոստի, ծիլակոստի, ոլորի միջային պեղի բարդ (բաց, բեկորավոր, ներհոդային համակցված հոդախախտում, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 240000 | |
| 1700077 | Բազուկակրի, նախաբազկի ոսկրների, ոլորի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 260000 | |
| 1700078 | Բազուկակրի, նախաբազկի ոսկրների, ոլորի բարդ (բաց, բեկորավոր, ներհոդային համակցված հոդախախտում, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքներ | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700079 | Ազդրակրի և կոնքի ոսկրների պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 420000 | |
| 1700080 | Ազդրակրի և կոնքի ոսկրների բարդ (բաց, բեկորավոր, ներհոդային համակցված հոդախախտում, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ | ԴԵՊՔ | 500000 | |
| 1700081 | Պրոկտոմիա, համակցված վիրահատություններ | ԴԵՊՔ | 420000 | |
| 1700082 | Շրտուր և պրոտոմիա մեկ համալսելի համար (մեկ միակողմ) | ՄԻԱՎՈՐ | 21000 | |
| 1700083 | Փոքր մետատուսնոց կոնստրուկցիաներ պեղի հարթակ, նախաբազկի հարթակ, անրակի հարթակ (լուսաբանչյուրի համար) | ՄԻԱՎՈՐ | 170000 | |
| 1700084 | Միջին մետատուսնոց կոնստրուկցիաներ՝ մեծ ոլորի հարթակ, բազուկակրի ոսկրների հարթակ (լուսաբանչյուրի համար) | ՄԻԱՎՈՐ | 220000 | |
| 1700085 | Մեծ մետատուսնոց կոնստրուկցիաներ՝ ազդրի հարթակ, բազուկի մեկ, սրունքի մեկ, ազդրի մեկ (լուսաբանչյուրի համար) | ՄԻԱՎՈՐ | 270000 | |
| 1700086 | Դաստակի և ոտնաթաթի փոքր հոդերի հոդախախտների կոնսերվատիվ բուժում հաղորդական կամ ընդհանուր անզգայացմամբ (ամբուլատոր պայմաններում) | ԴԵՊՔ | 40000 | |
| 1700087 | Ենթահոդախախտ (ամբուլատոր պայմաններում) | ԴԵՊՔ | 12000 | |
| 1700088 | Կոտրվածքների գիպային անշարժացում (վերին վերջույթ) | ԴԵՊՔ | 17000 | |
| 1700089 | Չեռնաթաթի մատների գիպային անշարժացում | ԴԵՊՔ | 8000 | |
| 1700090 | Ոտնաթաթի մատների գիպային անշարժացում | ԴԵՊՔ | 12000 | |
| 1700091 | Կոտրվածքների գիպային անշարժացում (ստորին վերջույթ) | ԴԵՊՔ | 21000 | |
| 1700092 | Ֆիբրոզային անշարժացում առանց ֆիբրոզային արժեքի | ԴԵՊՔ | 12000 | |
| 1700093 | Փափուկ հյուսվածքների անշարժացում, վնասների կամ ջրերի գերզանցում կապակցությամբ կատարվող գիպային անշարժացում | ԴԵՊՔ | 20000 | |
| 1700094 | Փափուկ հյուսվածքներից օտար մարմնի հեռացում | ԴԵՊՔ | 12000 | |
| 1700095 | Բուժական ներհոդային պլանկցիա | ԴԵՊՔ | 10000 | |
| 1700096 | Ստրոմէկտոմիա փոքր ծավալ | ԴԵՊՔ | 155000 | |
| 1700097 | Ստրոմէկտոմիա միջին ծավալ | ԴԵՊՔ | 225000 | |
| 1700098 | Ստրոմէկտոմիա մեծ ծավալ | ԴԵՊՔ | 300000 | |
| 1700099 | Ստրոմէկտոմիա ռադիկալ լիմֆոդենեկտոմիայով մեծ ծավալ | ԴԵՊՔ | 400000 | |
| 1700100 | Արվածքաբանական դեպերի բուժում մինչև 20 օր տևողությամբ՝ ներառյալ ընդհանուր անզգայացմամբ կատարվող նեկրէկտոմիաները (1 /օրվա գինը) | ԴԵՊՔ | 600000 | 30000 |
| 1700101 | Արվածքաբանական դեպերի բուժում 21 օր և ավել տևողությամբ՝ ներառյալ ընդհանուր անզգայացմամբ կատարվող նեկրէկտոմիաները (ընդհանուր գինը) | ԴԵՊՔ | 600000 | |
| 1700102 | Այնպիսի բարդ և բարդացած (կոմբինացված, համակցված) վերքերի վիրաբուժական մշակում (բացառապես վնասվածքների ժամանակ) | ԴԵՊՔ | 65000 | |
| 2.4 | Դատաբժշկական փորձաքննություն | | | |
| 0301461 | Դատաբժշկական փորձաքննի ուղեգրումով հետազոտում /մեծ/ | ՄՏՏՈՐՈՇՈՒՄ | 30000 | |
| 0301462 | Դատաբժշկական փորձաքննի ուղեգրումով հետազոտում գերեկային ստաց. /մեծ/ | ՄՏՏՈՐՈՇՈՒՄ | 12000 | |
| 2.44 | Շուրջօրյա հիվանդանոցային բուժօգնություն չսահմանող փոքր վիրաբուժական միջամտություններ | | | |
| 1101702 | Վերքի առաջնային վիրաբուժական մշակում և կարում | ԴԵՊՔ | 12000 | |
| 1101703 | Պարոնիխիաներ, ներառած եղունգ, եղունգի հեռացում | ԴԵՊՔ | 12000 | |
| 1101704 | Ֆեզմոնայի, թարախակոտի (արցես) բացում | ԴԵՊՔ | 12000 | |
| 1101705 | Վերնային կողմից հասցված վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակում (<4 կամ <4 շիճուկների ներարվումամբ) | ԴԵՊՔ | 12000 | |
| 1101706 | Փոքր վերքերի վիրակալություններ առանց կարիքի | ԴԵՊՔ | 4000 | |
| 2101702 | Վերքի առաջնային վիրաբուժական մշակում և կարում | ԴԵՊՔ | 12000 | |

| | | | | |
|---------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|--------|-----------------|
| 2101703 | Պարոնիխաներ, ներառած եղունգ, եղունգի հեռացում | ԴԵՊՔ | 12000 | |
| 2101704 | Ֆլեգմոնալի, թաղաթաղարի (աքսես) քայքայում | ԴԵՊՔ | 12000 | |
| 2101705 | Կենդանիների կողմից հասցված վնասվածքների առաջախյան վիրաբուժական մշակում (ՀՔ կամ ՀԿ շիճուկների ներարկմամբ) | ԴԵՊՔ | 12000 | |
| 2101706 | Փոքր վնասվածքների միակատրոններն առանց կտրելի | ԴԵՊՔ | 4000 | |
| 6 | ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված թշվառացի օգնության և սպասարկման տեսակներից ընտրված թշվառացի օգնության կազմակերպման նկատմամբ պայմանավորված պետական պատվերի տեղադրման գործընթացում կիրառվող հետազոտություններ | | | |
| 0207000 | Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ ընչ ճախաստարությամբ հիվանդանոցային բուժօգնություն մասնագիտացված բաժանմունքներում /մեծ/ | ԴԵՊՔ | 33700 | 13500 |
